24. ՀՅՈՒՄՄԵՅԻ ԽՍՐԱԽ

Ժամանակին մարթում մեկ իրեք ախչիկ ուներ։ Էղավ օր թագավորը ասքյար ուզեց, իրեն ժամանակն էլ լրացել էր, էրթալու կարողություն չուներ։ Հ'իրիկուն էղավ էկավ իրեն տունը նստավ, ճաշ բերին, տրտմած ճաշը կերավ։ Մեծ ախչիկը հարցրեց.— Հայրիկ, ինչի՞ ճաշ չես էնե, թթված ես։

Հերը ըսավ.— Թաղավոր ինձի ասքարության ուզել է, ես էրթալու կարողություն չունիմ։

Ախչիկն ըսավ.— Էդ շատ կոլայ բան է, ղու իմ պատրաստությունս տես, ես էրթամ քու տեղը։

Առավոտու ելան հայրը գնաց քաղաքը, ախչկան հագուստներ պատրաստեց, ամեն ինչովը, ձին, զենք, փամփուշները, ամեն մեկը իր տեղ պատրաստ էղավ։

Եղի օրը հայրը ձին պատրաստեց, թախլը խանեսեն դուրս քաշեց, ախչկան ըսավ.— Էկե, ամեն ինչը հազըր է օր էրթաս։

Ախչիկն էկավ պատրաստի, իրեն հոր ձեռքը համբուրեց, հայրն էլ ախչկան աչքերը պաքեց, ձիուն հեծուց ախչկան.— Աստված հետդ ըլլի զավակս,— ըսեց, ինքը էկավ իրեն տուն, իրեն ձին քաշեց, զենքերը կապեց ու սկսեց քյասար ճամբով էրթալ։ Ախչկան հ'առաջը կտրեց,— Ճամփորթ,— ըսավ,— պատրաստ կեցի, յան ես քեզի պիտի ըսպանեմ, յան դու ինձի պիտի ըսպանես։

Ախչիկ չկրաց դիմավորվե, ետ փախավ։ Ախչիկ մինչև տուն գա-

չուն, իրեն հայրը իրմե թեզ էկավ տունը, նստավ։ Ախչիկն էլ էկավ իրեն տունը։

Ախչկան հարցրեց թե.— Ախչիկ, ինչի՞ էկար։

Ըսավ.— Ճանապարհին մեկմ դիմավորեց, ուզեց ըսպանել ինձի, փախա ետ էկա։

Էն իրիկվնեն ճաշ բերին ախչկները, հայրը տրտում տխուր նըստած էր, օրթանչի ախչիկ հարցրեց ըսեց.— Հայր, ինչո՞ւ տրտում տխուր նստած ես։

Ըսավ.— Ես ինչպես ընեմ, ժամանակս լրացեր է, ինձի ասքրության գուղեն։

Ախչիկն ըսավ.— Ես կարող եմ քու տեղդ էրթըլու, դու իմ պատրաստությունս տես, ինչ որ արժան է, ես կէրթամ։

Առավոտուն հայրը դնաց քաղաք, ամեն պատրաստություն տեսավ ախչկան՝ զենքը, փամփուշ։ Ախչիկը իրեն պատրաստություն տեսավ, կապեց իր ամեն ինչը, առավոտուն ձին դուրս քաշեցին ախչըկան հ՚առջևը, հորը ձեռքը համբուրեց, հերն է իրեն աչքերը պաքեց.— Գնա՛, ախչիկս, աստված հետդ ըլլի։

Հայրը գնաց իրեն պատրաստությունով ձին հեծավ, իրեն զենքերն ու փամփուշները կապեց, հայրը քյասար ճամփով ախչկա ճամփան կտրեց։ Ախչիկն օր մոտիկ դիմավորեց, հայրը ըսավ.— Ճամփորթ, պատրաստ կեցի, յան ես քեզի պիտի ըսպանեմ, յան գուն ընձի։

Հայրն իրեն ախչկա վրան հարցակվավ, ախչիկը վախենալով ետ փախավ։ Հայրը իր մոտեն թեզ տուն էկավ, իր զենքերը փամփուշները արցկեց, նստավ։ Ախչիկ էկավ դուռը, ձիուցեն իջավ, ձին իրեն տեղը կապեց, մտավ տունը։ Հայրը հարցրեց՝ ախչիկ ինչո՞ւ էկար։

— Ճանապարհին մեկըմ ինձի պատահավ,— ըսավ,— ուզեց ինձի ըսպանել, ես փախա։

Էդ իրիկուն էման տրտում տխուր նստած էր հայրը՝ ճաշ բերին, ճաշ չարավ, պզդիկ ախչիկ[1] հարցրեց.— Հայր ինչո՞ւ ճաշ չես ըներ, տրտում տխուր նստեր ես։

Ըսավ.— Ինչպես ես տրտում չըլլիմ, ով ըլլի, թագավոր ասքյար գուզե, կարողութեն չունիմ էրթըլու։

Ախչիկ պատասխան տվեց.— Ես կարող եմ քու տեղդ էրթըլու, ինչ հարկավորություն ունի պատրաստ էրա, ես կէրթամ։

Գնաց. հրացան, փամփուշ մե գյուրզմ առավ, բերեց ախչկան թասլիմ էրավ։

---

[1] Թնագրում՝ ախպեր (Ս. Կ.)։

Առավոտուն ախչիկը փամփուշները կապեց, թվանքը կռնակը ձքեց, գյուրզը ձեռք առավ, հոր ձեռքը պաքեց, հերն էլ իրեն աչքերը պաքեց.— Գնա՛, աստված հետդ ըլլի,— ըսավ։

Հերը էկավ իրեն տուն, իրեն զենքը առավ, ձին հեծավ, քյասար ճամփով էկավ, ճանապարհի վրա կտրեց։ Որ ախչիկն օր մոտեցավ, հերն ըսավ.—Ճամփորթ, մոխքյամ կեցի, որ ես պիտի քեզի ըսպանեմ, յան դուն ինձի[1]։ Քշեց ախչկա վրա զարդելու, ախչիկը իրեն հ'ամուր պայեց, հերը չկըրցավ բանմ էնել։

Ախչիկն ըսավ.— Ճամփորթ, հիմա դո՛ւ, սրեն քուկն է, մոխքյամ կեցի։

Ախչիկը վըրեն քշեց, հերը ըսավ.— Ախչիկ, մի ըսպանե, ես քու հայրդ եմ։

Հերը ախչկա աչքերը պաքեց,— Գնա՛, աստված քու հետդ ըլլի։

Ախչիկը ելավ գնաց, հորեն բաժնվավ։ Շատ գնաց, քիչ գնաց, իրեք ճամփա ռաստ էկավ։ Մտանծուքի մեջ էր թե՝ ո՞ր ճանփով էրթամ։ Ձին լեզու ելավ,— Ինսան,— ըսավ,— ինչի՞ կը մտածես դու։

Ըսավ.— Ես չմտածեմ, վո՞վ մտածե, ես ճամփա չգիտցող, զարիր մեկն եմ, հիմա չիտեմ, թե ի՞նչ պիտի էնեմ։

Ըսավ.— Այս ճամփեն ֆիլան տեղը կէրթա, այս ճամփեն էլ ֆիլան տեղը կէրթա, այսինչ ճամփեն էլ Նեմրութ թագավորի քաղաքը կէրթա։ Էս ճամփեն վայրենի քարիմ գլուխ գելլե, որ Նեմրութ քաղաքը կէրևա։ Նեմրութ թագավոր ըսել է թե. «Ով որ էս քարեն իշնի, ախչիկս էնոր տամ պիտի»։

Ախչիկը մյուս ճամփեներով չգնաց։ Էկավ Նեմրութ քաղաքի ճամփով։ Էկավ ի՞նչ տեսավ, տեսավ մեծ քար մի, ելավ մեծ քարի գլուխը կայնավ, կը մտածեր դու. «Ես էս քարեն չեմ կրա իշնի, հ'ո՞ւր էրթամ», կը մտածեր դու, քաղաքը քարի տակը կէրևար։

Ձին ելավ զրուց, ըսավ.— Ինսան, ինչի՞ կմտածես, դու էս վայրենի տափերը ինձի վըրընգե, մինչև իմ գլխու թափեցես[2] յումրուզի պես բուղթիրաքլամիշ ըլլի[3], աչի ուզանգին զարգ, օր փորիս մեջը աղիքներս կտրտին, յա ես քարեն կու ցքեմ ինձի, յա սաղ կու մնանք, յա կու մեռնինք։

Որ ախչիկը զանգին զարդեց, ձին թռավ, քաղքի օրթալըղը կայնավ։ Թագավորին խարար տվին թե. «Քարեն մարթ մի թռավ, քաղքի օրթատեղը կայնավ»։

---

[1] Բնագրում՝ յան ես քեզի պիտի սպանեմ (Ս. Կ.)։

[2] Գագաթ (Ս. Բ.)։

[3] Շոգին բարձրանա, տնկվի (Ս. Բ.)։

Թագավորը ըսել էր թե. «Վով օր էդ քարեն ինքը ցքե, ախչիկս էնոր պիտի տամ»։ Կանչեց վուքելաները ըսավ.— Ես խոստացել էի, օր էդ քարեն վով օր ինքը ցքե, ախչիկս էնոր տամ։

Կանչեցին մարթուն, էղածին պես խոսան, մարթն էլ ընդունեց, ամեն գործերը տեսան։ Ախչիկը տարան օդեն, մարթու հետ, օր թե պառկեցուլին։

Երեք օր ետև մերը էկավ ախչկան տեսնալու, ախչիկը թթված, պռունկները կախած։ Ճակատը փոթ տեսավ ախչկան, մերը ըսավ.— Ինչի էրեսդ թթված, պռունկներդ կախված, ճակատիդ փոթ։

Ախչիկն ըսավ.— Մեր, թե օր ըսեմ՝ չ'իլլի, չըսեմ՝ չի'լլի։

— Ախչիկս ըսե։

— Ամեն գիշեր իմ մարթը ուր թուր օրթըլադը կու դնե, կըսե՝ քու միսդ.իմ միսին չը գըպի։

Մերը հերսոտելով դուրս ելավ, գնաց թագավորի քով, թագավորին ըսավ.— Մե ախչիկմ ունեի, էման մե վայրենի մարթում տվիր օր ախչկանս ըսեր է թե. «Թե օր միսդ մսիս դիպի, քեզի կը մորթեմ գու»։

Թագավորը հերսոտավ, կանչեց իրեն վուքելաները, ըսավ թե.— Ախչիկը տվինք, հիմա ախչկան վախեցուցեր է թե. «Քեզի կը ըսպանեմ գու, թե որ միսդ մսիս գըպի»։

Վուքելաները ըսին թագավորին օր.— Էսքան տարի Հյումմեի խսրախի համար քու խազանաներ փչացուցիր, մարթիքներ սպանեցիր, Հյումմեյի խսրախը չկըրցար ձեռքը բերե, ղրկենք Հյումմեի խսրախին, թող փառչալամիշ էնե էդ մարթուն։

Էքվընեն թագավորը կանչեց էդ մարթուն։ Մարթը գնաց թագավորու քովը կայնավ։

Ըսավ.— Ես քեզի տեղ պիտի ճամփեմ։

Մարթն ըսավ.— Ես կէրթամ, հ'ո՞ւր պիտի ճամփես։

— Ես քեզի Հյումմեի խսրախի Դերի սարը պիտի ճամփեմ։

Մարթը ըսավ.— Ես կէրթամ։

Ըսավ, ելավ էկավ իրեն ձիու մոտը նստավ թթված։

Ձին ըսավ.— Ինսան, ինչի՞ թթվեր ես։

Ըսավ.— Չիտեմ ինչի թթվել եմ։

— Հալբաթ քու ցավդ ի՞նչ է։

Ըսավ.— Թագավոր ինձի Դերի սար, Հյումմեի խսրախին կու ղրկե, ոչ ճամփան գիտեմ և ոչ սարը գիտեմ։

— Ինսան,— ըսավ,— էդիկ ես կրնամ կատարե, թե օր ուրիշ խնթիրք չէնի։

Էքվընեն ելավ, իրեն ձին հեծավ, գնացին։ Ճանապարհին սկսեց ձին խրատ տալ մարթուն, ըսավ.— Կէրթանք Դևրի սարի քյանարը[1] կիջնենք, ինձի կը պահես, էնոր խմած ջրի գուռը, քեզի կը խրատեմ, ցամքեցու, խուշլուղ օր կըլլի Հյումմեի խսրախը էրկու քուռիկով գուքա, դու ինոր գոի ջուրը իստակ ցամքեցու, գուքա ջուրը խմելու, կայե օր ջուր չկա, օրվա սարին վախտն է, նորեն ետ դառնա կէրթա. ցորկվան ջոքին գուքա, գուքա ջուրը, շատ ծարվցած է, գուքա օր գուռը ջուր չկա, Հյումմեի քուռիկները լեզվով կըսեն. «Մեղի ջուր խմցո՛ւ, ծառավ մեռանք», Հյումմեի խըսրախ քուռիկներուն կըսե թե. «Երանի թե էստեղ ինսան օղլիմ ըլլիր, իմ գյամս, սոլ կողմիս սև քարի տակն է, իմ գյամս ղարգեր, տաներ մե ջուրմ ջրեր», էն սրին դու վեր ել, գյամը քարի տակեն ա՛ռ, զարգ խսրախին, էգե իմ քովս էլլինք էրթանք։

Մարթը գնաց դոի քովը, ձին պայեց, ինքն էլ պայվտավ։ Հյումմեի խսրախը ցորեկվընեն էկավ որ ջուր չկա, քուռիկները Հյումմեի խսրախին ըսին.— Մեղի ջուր տո՛ւր, մենք ծառավ մեռանք։

Հյումմեին ըսավ.— Երանի թե ինսան օղլիմ ըլլեր, սոլ կողմիս սև քարի տակ գյամս հոն է, հաներ ինձի տաներ ջուր տար։

Էն սրին մարթը ելավ, քարի տակեն գյամը առավ, Հյումմեի խըսրախի բերանը զարդեց, հեծավ, էկավ իրեն ձիու քովը։ Հյումմեի խսրախին հեծավ, իրեն ձին ու քուռիկները ետքեն քաշելեն էկան։ Էկան թագավորի քաղաքը։

Թագավոր Հյումմեի խսրախի համար շատ ուրախացավ, մարթուն ըսավ.— Գնա օդետ ոըհաթ արա, ախչկաս հետ պառկի։

Գնաց օդեն իրիկուն ախչկան հետը պառկավ, իրեն թուր էլման իրեն ու ախչկա օրթըլաղը գրավ։

Էքվընե մերը էկավ ախչկա քովը, հ՚առաջենեն գեշ թթված տեսավ, մերը ելավ օդեսեն գնաց թագավորի քով ըսավ.— Դու Հյումմեի խսրախի համար ուրախ ես, մեկ ախչիկմ ունեի վայրենի, լեռնային մեկին տվիր, պիտի ախչիկս ըսպանե։

Թագավորը կանչեց իրեն կոլլոնները[2] ըսավ.— Մենք ինչպես էնենք օր էդ մարթը էրթա ըսպանվի։

Կոլլոնները ըսին.— Խրկենք Ջամ-Ջրաղին օր դևերը կուլ տան էտոը։

Թագավորը էքվընեն կանչեց ըսավ.— Ես քեզի Ջամ-Ջրաղին պիտի ղրկեմ։

---

[1] Եզերք (Ա. Բ.)։

[2] Պալատականներ (Ա. Բ.)։

էն էլ ըսավ.— Ես կ'էրթամ։

Ելավ գնաց իրեն ձիու քովը։ Մարթը թթվել էր, ձին ըսավ.— Ինչի՞ թթվել ես ինսան օղլի։

Մարթը ձիուն ըսավ.— Թագավոր ինձի ըսավ, թե քեզի Զամ-Զրաղին պիտի ղրկեմ, հիմա չիտեմ, ձի՛, Զամ-Զրաղը ո՞րտեղ է, ի՞նչ է։

Ձին ըսավ թե.— Ես կարող չեմ բերելու Զամ-Զրաղին, Հյումմեի խսրախի գործն է, գնա թագավորին ըսե թե՝ Հյումմեի խսրախը տու ինձի՛ էրթամ Զամ-Զրաղը բերեմ։

Մարթը գնաց թագավորին ըսավ.— Թագավորն ապրած ըլլի, Հյումմեի խսրախը գուզեմ։

Թագավորը կոլլոններուն կանչեց, ըսավ.—Դե, Հյումմեի խսրախը գուզե։

Կոլլոնները կըսեն.— Թագավորը ապրած կենա, տո՛ւր, Հյումմեի խսրախը էրկու հատ քուռիկ ունի, Հյումմեի խսրախեն գլուխ են։

Հյումմեի խսրախը բերին, մարթուն տվին, մարթը Հյումմեի խսրախ հեծավ ընգավ ճամփա։

Հյումմեի խսրախ ըսավ.— Ինսան օղլի, մենք հ'ո՞ւր կէրթանք։

Ըսավ.— Ինձ կու ղրկեն Զամ-Զրաղին, կէրթանք Զամ-Զրաղին բերելու։

Ձին ըսավ.— Ինսան օղլի, ինչպես որ ես քեզի կը խրատեմ, դու էն տեսակ էրե։ Հիմա կէրթանք Զամ-Զրաղի դռան դեմը կառնիմ ես, դու ինձի կապե գռան ղուզին[1], նե կու մտնիս, ինթուդին մե խոշրմ կա, խոշի առաջը միս կա, դուռրմ կը բանաս գելրմ կա, առաջը խոտ կա, դուռրմ խրփված՝ կը բանաս գու, դուռրմ կա բաց, բաց դուռը խփես գու։ Նե կը մտնիս Զամ-Զրաղ օխտ գլխանի դևի առաջ կը վառի գու։ Մե գյուրզրմ կը զարգես օխտ գլխանի դևին, դևը կըսե թե. «Ինսան օղլի մեմ էլ զարդ», դու ըսե թե. «Ես մորես մեկ եղել եմ», էլ չզարդես, Զամ-Զրաղը առ դուրս հ'ելի։

Հյումմեի խսրախ գնաց Զամ-Զրաղի դռան հ'առաջ կայնավ, նե մտավ, գյուրզ քաշեց դևին զարդեց, դևը ըսավ. «Ինսան օղլի մեմ էլ զարդ»։

— Մորես մեկ եմ էղել,— ըսավ։— Զամ-Զրաղը առավ ու ելավ։ Դևը գելին ճվաց.— Դե՛լ,— ըսավ,— իդի մարթուն բռնե։

Գելն ըսավ.— Էսքան տարի իմ առաջս խոտ էիր դրել, մարթը էկավ միս գրավ։

— Խոշ,— ըսավ,— էդ մարթուն բռնե։

---

[1] Շղթա (Ս. Բ.)։

Խոչն ըսավ.— Քեզի բռնե, էսքան տարի իմ առաշս միս էիր դրեր, մարթն էկավ միսը վերուց խոտը դրեց։

— Ծածկած դուռ,— ըսավ,— բռնե իդոր։

Ծածկած դուռը ըսավ.— Քեզի բռնե, էսքան օր չ'ծածկեցիր օր կրունդս հանդստեր։

— Խփած դուռ, իդոր բռնե։

Ըսավ,— Խփած դուռը քեզի բռնե օր էսքան տարի չբացիր օր կրունդս հանդստեր։

Մեկ էլ, դեն տեսավ օր ճար չկա, անիծեց ըսավ.—Մանչ ես ախչիկ ըլլիս, ախչիկ ես՝ մանչ ըլլիս։

Մարթն ազատվավ, էկավ հեծավ ձիուն։ Ճամփեն Հյումմեի խսրախը հարցրեց թե.— Ինսան օղլի ի՞նչ տեսակ ես դու։

Ըսավ.— Ի՞նչ կը հարցնես։

Ըսավ.— Քու առաճդ բան կա՞։

Ըսավ.— Ես իմ առաջ յոխլամիշ[1] կենեմ, իմ առաջ ղամիշմ կա։

Ըսավ.— Դու քու մուրադիդ հասար, մա՛րթ, ամեն մարթ իր մուրադին հասնի։

Հյումմեի խսրախ մե նառա[2] քաշեց, թագավորի քաղաքը դողդողաց, ժաժ ելավ։ Թագավորեն խաբար տվին թե մարթը էկավ։

Մարթը տարավ թագավորին Ջամ-Ջրաղը թասլիմ արավ։

Թագավորն ըսավ.— Գնա քու օդետ, պառկի ախչկանս հետ։

Իրիկուն էղավ, մարթն ախչկա հետը պառկավ, թուրը մեշտեղը չդրավ։

Ալ շաֆթալի, վերշաֆթալի, շաֆթալի չիգիգի գյոզ չըխարդըր, ուզունըն, դիզընգան, կոանըն գյոզընդան, ալի, ալ, կրմզսի կրմըզի հար բիր կըրմըզըսի, գագար յուղրին կըրմըզի (մե պաքըմ, էրկու պաքըմ, շաֆթալու կորիզը աչք կը հանե գու, էրգենի ծնկեն, կարճի աչքին ալ ու ծաղիկ, ամեն ծաղիկը կընե հարիր հազար կարմիր օսկի)։

Էքվան օր թագավոր բերեց հարսանիքը սկսեց, օխտն օր, օխտը գիշեր դաուլ զուռնա զարդին, կերան, խմեցին, ուրախ էղան, էնոնք իրանց մուրադին հասան, դուք էլ ձեր մուրադին հասնիք։

Երկնուց իրեք խնձոր իշավ, մեկը՝ ըսողին, մեկը՝ գրողին, մեկն էլ լսողին։

---

[1] Փնտռել (Ս. Բ.)։

[2] Խրխնջոց (Ս. Բ.)։